

<https://doi.org/10.59982/18294359-23.14.2-vt-07>

Վահե Աշոտի Թորոսյան

ի.գ.թ., դոցենտ

ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն

vaxinak91@mail.ru

Ամփոփագիր

Իրավունքի հասկացության և էության շուրջ մտորումները մշտապես զբաղեցրել են գիտնականների քննախոյզ միտքը: Իրավունքի շուրջ հյուսվել են զանազան մոտեցումներ, մշակվել բազմաթիվ դոկտրիններ և հայեցակարգեր, որոնք մի կողմից փորձել են բացահայտել այդ ֆենոմենի բովանդակությունը, իսկ հակադիր կողմից՝ նպաստել տարամերժ տեսակետների կուտակմանը: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը իրավունքը մերթ հանգեցվել է պետության կարգադրությանը, մերթ՝ բանականության և արարչաստեղծության սահմանմանը, մերթ՝ անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին և այլն: Ժամանակի և տարածության մեջ իրավունքը նույնացվել է ինչպես ազատության, արդարության և հավասարության համամարդկային գաղափարներին, այնպես էլ բռնությանը և հարկադրանքին:

Սույն հոդվածում իրավական և քաղաքական ուսմունքների համատեքստում կփորձենք վերաիմաստավորել իրավունքի տեսության առանցքային հարցերից մեկի՝ դրական-իրավաբանական հայեցակարգի էությունը՝ որպես յուրօրինակ իրավական մտածողություն և իրավաընկալում:

Այս մոտեցման դիրքերից իրավունքը զտվում է իր արժեքանական իմաստից և իր փիլիսոփայական համատեքստից և հանգեցվում պետական իշխանության կարգադրությանը, նրա անվիճելի հրամանին: Իրավունքը նույնացվում է օրենքի հետ, անկախ նրանից այդ օրենքը արդարացի է, բարոյական է, բանական է թե ոչ: Սրա վտանգը կայանում է նրանում, որ իրավունք կարող է համարվել ցանկացած կամայականություն և տարատեսակ խմբային հավակնությունների լեգալ ամրագրում:

Հիմնաբառեր. դրական-իրավական մտածողություն, բնական-իրավական մտածողություն, պոզիտիվիզմ, լեգիզմ, իրավաքաղաքական միտք, իրավաընկալում:

Ներածություն

Իրավաբանական պոզիտիվիզմի ակունքները հասնում են մինչև հին չինական **լեգիստների** ուսմունքը, որի հիմքում ընկած է **հարկադրանքը և բռնությունը**՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորման լավագույն միջոց: Լեգիստների «օրենքականության» գաղափարները դարձան իրավաբանական պոզիտիվիզմի

ձևավորման առաջին սաղմերը [Книга правителя области Шан, с. 196]: Համոզված պետք է նշել, որ իրավաբանական պոզիտիվիզմի առաջացման նախադրյալները առավելապես կապված են պետության՝ որպես քաղաքական կազմակերպության զորեղացման հետ, որը հիմնականում ընդգրկում է բացարձակ միապետությունների ծաղկման շրջանը: Պետության դերի բացարձակացումը՝ **էպաիզմը**, հանրային կյանքի բոլոր երևույթները, այդ թվում նաև իրավունքը ստորադասեց պետությանը: Հատկապես Թոմաս Հոբսի և Ժան Բոդենի էտատիստական մոտեցումները նպաստավոր միջավայր դարձան իրավաբանական պոզիտիվիզմի ձևավորման համար:

էտատիզմը վերստին ընդգծվեց արդյունաբերական կապիտալիզմի շրջանում, երբ շուկայական հարաբերությունների կարգավորման և կայուն իրավակարգի հաստատման համար պահանջվեց պետության գործուն մասնակցությունը: Այս մոտեցումները պետք է արմատապես վերանայեին դարաշրջանի բնաիրավական մտածողությունը և ձևավորեին հետհեղափոխական իրավունքի նոր հայեցակարգ:

Պոզիտիվիզմի՝ որպես փիլիսոփայական ողղության հիմնադիր համարվում է ֆրանսիացի մտածող **Օգյուստ Կոնտը**: Նրա ուսմունքի առանցքը **էմպիրիզմն** է, ըստ որի երևույթների ճանաչողության հիմքում դրվում էին ոչ թե անորոշ և վերացական մտահանգումները, այլ փորձնական դիտարկումները և էմպիրիկ դատողությունները: Կոնտը չէր ընդունում իրավունքի ազատական մեկնաբանությունը, քանի որ այն կասեցնում էր հանրային համերաշխությունը, մինչդեռ իրավունքը պետք է փոխարինել պարտականությամբ՝ դրանով իսկ սուբյեկտիվ իրավունքները հանգեցնելով սոցիալական պարտքի: Կոնտը կարծես ոչ թե մեկնաբանում էր իրավունքը, այլ պարզապես ժխտում նրա գոյությունը: Նրա պատկերած հասարակարգը իր էությամբ հակակրոնական է, իսկ ավելի ստույգ՝ **սոցիոկրապական**, որտեղ հերքվում են աստվածաբանությունը, մարդու իրավունքները, խստորեն չափվում է մարդկանց վարքը՝ հանգեցնելով մի նոր սոցիալական կրոնի գոյությանը, որտեղ Աստծո փոխարեն դրվում է սոցիումը [Թորոսյան, 156]:

Իրավական պոզիտիվիզմի հիմնադրույթների մշակումը կապվում է 19-րդ դարի անգլիացի իրավաբան, Լոնդոնի համալսարանի դասախոս **Ջոն Օսթինի** հետ, որի վրա, իր հերթին, զգալի ազեցություն էին թողել Թոմաս Հոբսի և Երեմիայի Բենթհամի իրավաքաղաքական հայացքները: Օսթինը օրենքների դասակարգման մեջ առանձնացնում էր.

- ա) աստվածային օրենքները,
- բ) բարոյականության օրենքները,
- գ) պետության կողմից սահմանված դրական օրենքները:

Այս օրենքները ուսումնասիրվում են համապատասխանաբար՝ աստվածաբանության, էթիկայի և իրավագիտության կողմից: Վերջինս՝ որպես ստույգ գիտություն, առնչվում է միայն գրված իրավունքին՝ անկախ նրանից այն ինչպիսի բարոյական բնութագիր ունի:

Օսթինը իրավունքի ճանաչողությունը մեկնաբանում է էմպիրիզմի (փորձապաշտություն) դիրքերից, որտեղ իրավունքը ձերբազատվում է բարոյական, կրոնափիլիսոփայական, մետաֆիզիկական բացատրություններից և ստանում կոնկրետ իրավաբանական հիմնավորում: Այլ կերպ ասած՝ իրավունքի ներքին բովանդակությունը հանգեցվում է իրավունքի ձևին: Իրավունքը դիտվում է կանոնների և նորմերի համախումբ, որը ստեղծվում է պետության կողմից և հանդիսանում վերջինիս հրամանը: Իրավունքը ապահովվում և երաշխավորվում է պետական հարկադրանքի միջոցով: Օրենքների հետ մեկտեղ, իրավունքի համակարգում ներառվում են նաև դատական նախադեպերը, որոնք միասին կազմում են ամբողջ օրենսդրությունը: Ինչ վերաբերում է սովորույթին, Օսթինը այն դիտարկում է բարոյականության տիրույթում՝ միաժամանակ նշելով, որ այն իրավաբանական արժեք է ստանում դատական գործերում կիրառվելուց կամ պետության կողմից վավերացվելուց հետո:

Ջոն Օսթինի պոզիտիվիստական իրավաընկալումը, փաստորեն, իրավունքը հանգեցնում էր քաղաքականության գործիքի [Austin, 492]: Նրա մոտեցումները պարարտ հող էին ստեղծում ավտորիտար ռեժիմների հաստատման համար, որտեղ պետության կամայական քմահաճույքը կարող էր դիտարկվել որպես օրենք և իրավունք:

Մարքսիստական պոզիտիվիզմ

Պետք է նկատել, որ իր բնույթով պոզիտիվիստական է իրավունքի մարքսիստական ըմբռնումը: ***Մարքսիզմի*** տեսությունը հենվում է մատերիալիստական աշխարհայացքի վրա, որտեղ հասարակական կյանքը պայմանավորվում է արտադրական եղանակների հերթափոխությամբ: Հասարակական-տնտեսական ֆորմացիաները հանդիսանում են ֆունդամենտ և նախահիմք նաև պետության և իրավունքի համար:

Մարքսիզմի տեսաբանները գտնում էին, որ պետությունը և իրավունքը ծագել են դասակարգային պայքարի հետևանքով: Դասակարգերի տրոհումը հանգեցնում է տիրապետողների և շահագործվողների առաջացմանը, որտեղ տիրապետողները իրենց շահերի պահպանման նպատակով ստեղծում են պետություն: Այսինքն՝ պետությունը հասարակության զարգացման արդյունք է, պատկերավոր ասած՝ նրա զավակը, որը օտարվում է հասարակությունից և դառնում տիրապետողների պաշտպանը: Պետությունը ինքնին ազատության հակադրությունն է և ազատություն կլինի այն ժամանակ, երբ չի լինի պետություն:

Մարքսիստների կարծիքով պետությունը և իրավունքը հավերժական չեն և կոմունիստական հասարակարգում դատապարտված են վերացման: Պոզիտիվիզմի հետ նրանց նմանությունը արտահայտվում է օրենքի և իրավունքի նույնացման և իրավունքը պետաիշխանական կարգադրագիր ընկալելու մեջ: Սակայն կա մեկ առանցքային տարբերություն, այն է՝ մարքսիստ-լենինիստները իրավունքը լիովին չէին օտարում բարոյաէթիկական նորմերից:

Մարքսիզմի հիմնադիր-տեսաբաններ **Կարլ Մարքսը** և **Ֆրիդրիխ Էնգելսը** հասարակարգի փոլային վերափոխման կողմնակից էին: Նրանք համոզված էին, որ սոցիալիզմին անցնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ **բռնի հեղափոխությամբ** հաստատել **պրոլետարիատի դիկտատուրա**: Այն նախապետության ձև է և սոցիալիզմի հաստատման դեպքում վերափոխվում է **համաժողովրդական պետության**: Վերջնական նպատակ է դիտվում կոմունիզմի հաստատումը, որի դեպքում կփոխվի աշխատանքի բնույթը. այն կդադարի գոյության միջոց լինելուց և կդառնա բավականության միջոց՝ «*յուրաքանչյուրին ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների*»: Մարդը ինքը կցանկանա կամավոր ծառայել հասարակության բարօրությանը: Միաժամանակ կվերանա պետությունը՝ վերածվելով **հասարակական ինքնավարության**, որը կընդգրկի կոոպերատիվները, արհմիությունները, հասարակական կազմակերպությունները: Պետական ապարատը կծուվի հասարակությանը՝ դառնալով հասարակության ինքնավարության օրգան: Կվերանան բյուրոկրատիան և բանակը՝ որպես պարագիտային կառույցներ, իսկ պառլամենտը և դատարանները անպետք խոսարաններից կվերածվեն աշխատող մարմինների: **Վ. Լենինը** դիպուկ էր նկատում, որ պառլամենտում շաղակրատում են և ճոռոմաբանում՝ խաբելով սեփական ժողովրդին:

Մի խոսքով, կոմունիզմի հաղթանակով պետության գոյությունը կդառնա անիմաստ և նա կմահանա: Ուշագրավ է, որ պետությունը ոչ թե կտրուկ, մեկ հարվածով է ոչնչանում, ինչպես անարխիստական ուսմունքներում, այլ դասակարգերի վերացման հետ մեկտեղ աստիճանաբար մահանում է: Պետության մահացմամբ վերանում է նաև նրա հրամանը՝ **իրավունքը**, փոխարինվելով հասարակության դաստիարակման միջոցներով, որոնց համակցությունն էլ կազմում է կոմունիստական բարոյականությունը:

Լենինը հետագայում ամբողջացրեց այս դրույթները՝ պետությունը համարելով մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու մեքենա [Ленин, 75], իսկ իրավունքը վերջինիս կամքը՝ բարձրացված օրենքի մակարդակի: Լենինի համոզմամբ հասարակության մեջ օբյեկտիվորեն գոյություն ունեն դասակարգային հակամարտ շահեր, որոնք անլուծելի են և պետության գոյությունն ինքնին հակադրությունների մշտատևության ապացույցն է: Ասել է թե՛ պետությունը դասակարգերի անհաշտելիության արդյունքն է: Լենինի խոսքերով՝ «*մենք կողմնակից ենք դեմոկրատական հանրապետության, իբրև կապիտալիզմի օրոք պրոլետարիատի համար պետության լավագույն ձևի, բայց մենք իրավունք չունենք մոռանալու, որ ամենադեմոկրատական բուրժուական հանրապետության մեջ էլ ժողովրդի բաժինը վարձու ստրկությունն է*» [Լենին, 26]:

Պոզիտիվ իրավունքը փաստորեն մարդու ստեղծագործության արդյունքն է: Պայմանականորեն, եթե մարդը որոշի, որ մարդակերությունը ընդունելի է, ապա այն հնարավոր է արտացոլվի օրենքներում: Իսկ պոզիտիվիստական ընկալման տեսանկյունից օրենքը օրենք է, անկախ իր իմաստային բովանդակությունից և այն պետք է անվերապահ կիրառվի: Հետևաբար, **պոզիտիվ իրավունքի առաքելությունը մեր կարծիքով պետք է լինի հասարակության մեջ տիրող անբարո երևույթների**

օրինական զսպումը և մարդու էության պահպանումը: Այսպեղ իրավունքին պետք է աջակցեն կրոնն ու բարոյականությունը, որպեսզի իրավական սահմանագիծը ճշմարտության և արդարության ծիրում լինի:

Նեոպոզիտիվիզմ

Պոզիտիվիզմի արդիական տարբերակը համարվում է **նեոպոզիտիվիզմը**, կամ ինչպես ասում են **նորմատիվիստական հայեցակարգը**: Հիմնադիրը 20-րդ դարի ավստրիացի նշանավոր իրավագետ **Հանս Բելզենն** է, որի մշակած դոկտրինը լայն տարածում գտավ ողջ աշխարհում: Նա առաջ քաշեց այսպես կոչված «**մարդի իրավունքի տեսությունը**» (1934թ.), որի առանցքը իրավունքի զտումն է «կողմնակի» ազդեցություններից: Բելզենը գտնում էր, որ իրավագիտությունը անհարկի ընդլայնել է իր իմացաբանական սահմանները՝ ի հաշիվ բարոյականության, էթիկայի, սոցիոլոգիայի, հոգեբանության և այլն: Անհրաժեշտ է իրավունքը մաքրել բոլոր տեսակի փիլիսոփայական, մետաֆիզիկական բնութագրումներից և թողնել այնպիսին, ինչպիսին իրականում այն կա: Իրավունքը պետք է ձերբազատել իրավունքի էության վերաբերյալ վերացական հարցերից, որոնք իրավագիտությունը ծանրաբեռնում են տեսական-վերացական հարցերով: Թե՛ Ֆաշիստական Գերմանիայի, թե՛ Խորհրդային Միության իրավունքը ըստ Բելզենի՝ նույնքան իրավունք է, ինչպես ցանկացած այլ իրավունք, որքան էլ այն մեզ դուր չգա: Արդարության և անարդարության հարցերը իրավունքի տիրույթից դուրս են. դրանք ենթարկվում են բարոյական չափումներին:

Բելզենի պնդմամբ իրավունքը պետության հարկադրանքով օժտված հիերարխիկ նորմերի համակարգ է [Мальцев, 159], որի գլուխը սահմանադրությունն է, ապա օրենքները և դատական որոշումները: Իրավունքը զուտ հրաման է, նորմ, որի պատճառով էլ Բելզենի նեոպոզիտիվիզմը կոչվեց նաև **նորմատիվիզմ**: Միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության հարցերում Բելզենը առաջնահերթությունը տալիս էր միջազգային իրավունքին: Ինչ վերաբերում է պետության հասկացությանը՝ Բելզենը այն դիտարկում էր իրավունքի հետ անքակտելի կապի և սերտաճման մեջ: Պետությունը չտարանջատելով իրավունքից՝ Բելզենը եզրահանգում է, որ ցանկացած պետություն իր բնույթով իրավական պետություն է:

Իրավաբանական նեոպոզիտիվիզմի վառ ներկայացուցիչներից է **Հերբերտ Հարթը**: Նրա և բնական իրավունքի տեսաբան Լ. Ֆուլլերի գիտական բանավեճը բուռն արձագանք գտավ հետպատերազմյան Եվրոպայում՝ կապված նացիստական իրավունքի կիրառելիության հետ: Հարթը համոզված էր, որ իրավունքը՝ որպես նորմատիվ համակարգ, տարանջատվում է արդարության և բարոյականության բնագավառներից [Hart, 13]: Ի հակադրություն սրան՝ Ֆուլլերը գտնում էր, որ իրավունքը և բարոյականությունը սերտորեն կապված են միմյանց, համապատասխանաբար՝ պարտականության և պարտքի տեսանկյունից:

Պետք է նկատել, որ իրավաբանական պոզիտիվիզմի և նեոպոզիտիվիզմի հիմնական տարբերությունը այն է, որ նեոպոզիտիվիստները օրենքը մեկնաբանում էին

հենց օրենքի միջոցով: Եթե պոզիտիվիզմը օրենքը բացատրում էր պետության հասկացության միջոցով, ապա նեոպոզիտիվիզմը այն բացատրում էր «մաքուր օրենքի» միջոցով՝ լեգալացնելով պետությունը:

Իրավաբանական պոզիտիվիզմի հայրենական դոկտրինալ մեկնաբանությունը

Մեզ համար ուրույն հետաքրքրություն է ներկայացնում նաև իրավաբանական պոզիտիվիզմի հայրենական դոկտրինալ ըմբռնումը: Այն ևս, ըստ էության, հանգեցվում է իրավունքի էությունը ժխտող իրավաբանական մտածողությանը, որի պարագային գերազնահատվում է պետության դերը հասարակական հարաբերությունների կարգավորման գործում, մերժում մարդու բնական, անօտարելի իրավունքները և այդպիսով նախադրյալներ ստեղծում իրավական կամայականության համար [Ղամբարյան, Մուրադյան, 229-230]: Հայ ականավոր գիտնական, ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը իրավաբանական պոզիտիվիզմի (լեգիզմ) բնութագրական հատկանիշ է դիտում արհամարհանքը մարդու և քաղաքացու իրավունքների նկատմամբ, իշխանության ջատագովումը և դրա օրինաստեղծ հնարավորությունների գերազնահատումը, որտեղ ամենուր իշխում է այն պատկերացումը, որ մարդն իշխանության ենթակա օբյեկտ է և ոչ թե ազատ սուբյեկտ [Ներսեսյանց, 30]: Որպես այս մոտեցումների տրամաբանական շարունակություն լեգիզմը հաճախ մեկնաբանվում է ավտորիտարիզմի նորմատիվային արտահայտություն [Հարությունյան, 155]: Օրենքականությունը անտեսում է օրենքների բովանդակային կողմը, դրանց կապը հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր գործոնների հետ՝ նախադրյալներ ստեղծում ինքնակալական պետության ձևավորման համար [Վաղարշյան, 37]: Այսինքն մենք կարող ենք հստակ արձանագրել, որ պոզիտիվ իրավունքը մերժում է մարդու բնական և անօտարելի իրավունքները, և առհասարակ իրավունքի էությունը և իդեան:

Եզրակացություն

Ինչպես պարզ դարձավ իրավաբանական պոզիտիվիզմի էությունն այն է, որ իրավունքը սոսկ պետական իշխանության հրամանն է, պարտադիր պատվիրանը: Պետության կողմից ստեղծված օրենքները, դատական նախադեպերը, ենթաօրենսդրական և այլ ակտեր հանդես են գալիս որպես իրավունքի միակ աղբյուր, որից դուրս իրավունք գոյություն չունի: Մարդը իրավունքներ է ձեռք բերում ոչ թե բնության կամ արարչաստեղծության, այլ պետության սանկցավորման ուժով: Ակնհայտ է, որ այստեղ գերազնահատվում է պետության դերը. պետությունը համարվում է առաջնային, իսկ իրավունքը ածանցյալ է՝ որպես նրա գործունեության, իրավաստեղծության արդյունք:

Ընդհանուր առմամբ, պոզիտիվ իրավունքի տեսությունները իհարկե մի կողմից ապահովում են կայուն իրավակարգ, իրավական որոշակիություն, կանխատեսելիություն, սակայն, մյուս կողմից՝ մերժելով մարդու բնական և անօտարելի

իրավունքները, դրանք նախադրյալներ են ստեղծում իրավական կամայականությունների համար, որոշ դեպքերում հանգեցնելով բռնության «օրինականացմանը», ավտորիտար ռեժիմների հաստատմանը:

Գրականության ցանկ

1. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն, ուս. ձեռնարկ, Երևան, 2014, 692 էջ:
2. Ա. Հարությունյան, Իրավունքի փիլիսոփայություն, ուս. ձեռնարկ, Ստեփանակերտ, 2023թ., 332 էջ:
3. Ա. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-2, դասախոսություն ԵՊՀ, Եր., հեղ. հրատ., 2011թ., 448 էջ:
4. Վ. Թորոսյան, Իրավաքաղաքական մտքի պատմություն, ուսումնական ձեռնարկ, Եր., Ոսկան Երևանցի, 2021, 248 էջ:
5. Վ. Ներսեսյան, Պետության և իրավունքի տեսություն, բուհական դասագիրք, Երևան, Նաիրի 2001թ., 300 էջ:
6. Վ. Ի. Լենին, Պետություն և հեղափոխություն, Եր., Հայաստան, 1988, 183 էջ:
7. В. И. Ленин, Полное собрание сочинений. Том 39, изд. политической литературы, М., 1919, 623 с.
8. Г. В. Мальцев, Понимание права. Подходы и проблемы, М., 1999, 419 с.
9. Книга правителя области Шан (Шан Цзюнь Шы), М., Ладомир, 1993, 392 с.
10. John Austin, The Province of Jurisprudence Determined, The Lawbook Exchange, Ltd. (November 5, 2012), 492 p.
11. H. L. A. Hart, The Concept of Law. Oxford University Press (published 2012), 327 p.

POSITIVE-LEGAL SYSTEM AS LEGAL THINKING: THE LETTER OF THE LAW

Vahe Torosyan

PhD in Law, Associate Professor

EUA, Chair of Law

Abstract

Reflections on the concept and essence of law have always occupied the inquisitive minds of scientists. Various approaches have been woven around the law; many doctrines and concepts have been developed, which, on the one hand, tried to reveal the content of this phenomenon and, on the other hand, contributed to the accumulation of different points of view. From ancient times to the present day, law has been reduced to the order of the state, to the definition of intelligence and creativity, to the socio-psychological characteristics of a person, and so on. Across time and space,

law has been identified with the universal ideas of freedom, justice, and equality, as well as with violence and coercion.

From the positions of this approach, law is filtered from its value meaning and its philosophical context and reduced to the decree of the state power, its indisputable command. Law is equated with law, whether that law is just, moral, rational, or not.

In this article, in the context of legal and political teachings, we will try to redefine one of the key questions of the theory of law: the essence of the positive-legal concept as a unique legal thinking and legal perception. The danger of this is that any arbitrariness and legal fixation of various group ambitions can be considered a right.

Keywords: *positive-legal thinking, natural-legal thinking, positivism, legalism, legal-political thought, legal perception.*

Ներկայացվել է՝ 10.11.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 20.11.2023թ.